Խ Գ .

Ի՞նչ անեմ կամ ի՞նչ լինամ, չեմ հաւտար ու չեմ մոռանար.
Հազար եար կուտան փոխան, չեմ առնուր ու զքեզ չեմ ի տար.
Արե՛կ զայս ալէմս ի ժուռ, բեր ցըցուր զէտ մէկ մի ալ,
Որ տամ իմ սըրտիս ումէտ, աչերուս ասեմ թէ՝ Մի՛ լար:

Խ Դ .

Աշուն էր՝ եղաւ գարուն, ա՛հ քանի՛ կենանք մեք ի տուն.
Եկէք որ պաղչան մըտնունք ու խըմենք հետ ծառ շըքերուն.
Պըլպուլն ի վարդին սիրուն համբերէ զինչ մանչն ի գինուն.
Նըստեր ի վերայ ճըղին, սաղմոսէ ինքըն տունէ տուն:

Խ Ե .

Սիրե՛մ զայդ սիրուն երեսդ որ լուսին ի մօտն է գերի.
Պագնե՛մ զայդ բարակ պըռկունքդ, որ շէքէրն ի մօտն է լեղի:
Թուխ աչքդ ու կամար ունքերդ քան ըզծով կու զարնէ ալի.
Բերնիկդ է ի շիշ նըման որ վարդին ջըրովն էի լի:

Խ Զ .

Սոխախովդ ի վար կուգ՚ի, լուկ մէկ մի ուշիկ ձայն էած.
Դառնամ ի յետիս նայիմ, խօշ եարս է կանգներ՝ շար շապկանց.
Զլաչկիկն թուլումուլ կապեր, զկէս ճակտին թողեր է ի բաց,
Թուխ աչուին ծարուր քաշեր, էտ քաֆրիկդ ելեր յօրինաց:

Խ Է .

Այս աստընուորիս վերայ, դու մատնի, ես ակն ի վերայ.
Դոր որ պաղ աղբիւր մի կայ, դու կանանչ, ես ցօղն ի վերայ:
Խընծոր ես ծառին ճըղին, ես կանանչ թըփիկի վերայ,
Վախեմ թէ աշունընն գայ, քեզ քաղեն, թուփըս չորանայ:

Խ Ը .

Յայդ դաշտէդ ի վայր գայի անարատ սըրտովս դէպ ի տուն.
Իմ եարըն ինծի դիպաւ, գոյնըն շատ քան զբարկ արեւուն.
Զոտկունքս ես արգել տըւի, պագ մ՚առնեմ ու երթամ ի տուն.
Իմ եարն ինձ ճուղապ երետ, թէ՝ Կացի՛ր, լինի իրիկուն,
Իմ հայրս ելնէ ժամ երթայ, անհաւատ մարիկս չէ ի տուն,
Արե՛կ, զքեզ ի ծոցս առնում, մինչ որ գայ լոյսն առաւօտս: